

Կոտայքի մարզպետը ՏԿԵ նախարարի հետ այցելել է մարզում կառուցվող առաջին սանիտարական աղբավայրի տարածք

ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի, Հրազդան համայնքի ղեկավար Սեւակ Միքայելյանի հետ այսօր այցելել են Հրազդանում կառուցվող առաջին սանիտարական աղբավայրի տարածք եւ ծանոթացել շինարարության ընթացքին:

Հայաստանի Հանրապետության Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրված, ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացված միջազգային համաձայնագրով իրականացման փուլում է գտնվում «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր և երկու մարզերում ներդնել աղբահանության ինտեգրված արդյունավետ համակարգ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն 11,0 մլն Եվրո է, որից 5,5 մլն. եվրոն հանիսանում է վարկային միջոց, 5,5 մլն. եվրոն՝ դրամաշնորհ:

Նախարարի հետ նախ հետևել են Ակունք համայնքում կառուցվող փոխաբեռնման կայանի շինարարական աշխատանքներին, որտեղ նախատեսվում է Աբովյանի տարածաշրջանի բնակավայրերից հավաքված աղբը կուտակել, խտացնել, ապա մեծ կոնտեյներներով տեղափոխել նոր կառուցվող սանիտարական աղբավայր:

Այս աշխատանքներին զուգահեռ երկու մարզերի ինտեգրված աղբահանության համակարգի ներդրման նպատակով միջազգային մրցույթով ընտրված շվեդական «ՍՎԵԿՈ» ընկերության խորհրդատուների հետ մշակվում և ավարտական փուլում են ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար աղբահանության սխեմաները: Մշակվել են աղբավայրի և փոխաբեռնման կայանների շահագործման համար անհրաժեշտ տեխնիկայի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը և ընթացքում են վերջիններիս գնման համար մրցութային փաթեթների պատրաստման աշխատանքները: Մշակվել են նաև երկու մարզերի բոլոր բնակավայրերում աղբահանության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աղբատար մեքենաների ու աղբամանների տեխնիկական բնութագրերն ու քանակը: Նախատեսվում է իրականացնել գնումների գործընթացը:

Սանիտարական աղբավայրի և փոխաբեռնման կայանների շինարարությունը նախատեսվում է ավարտել 2022 թվականի տարեվերջին: